ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՈՒԲՍԻԴԻԱՅԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N 121

ք.Աշտարակ 01 02 2016թ

Արագածոտնի մարզպետարանը ի դեմս աշխատակազմի ղեկավար Հ.Գևորգյանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետև 'Պատվիրատու') մի կողմից և «Աշտարակի Դպրոց-դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ի դեմս տնօրեն՝ Ա.Հովակիմյանի, որը գործում կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ 'Կատարող') մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում իրականացնել հիմնական ընդհանուր կրթության շրջանակներում մասնագիտացված կրթության ուսուցման պարտավորությունը միջին տարեկան 290 աշակերտի համար, միջնակարգ ընդհանուր կրթության շրջանակներում մասնագիտացված կրթության ուսուցման պարտավորությունը միջին տարեկան 290 աշակերտի համար, այսուհետև՝ Ծառայություններ՝ համաձայն կրթական չափորոշիչների:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ և ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարված Ծառայությունների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Առանց Ծառայությունների արդյունքի դիմաց վարձատրելու՝ միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե Կատարողի կողմից կատարված Ծառայությունները չեն համապատասխանում սահմանված պահանջներին և (կամ) խախտել է Ծառայությունների կատարման ժամկետը և Ծառայությունները չեն կարող կատարվել պատվիրատուի համար ընդունելի ժամկետում:

2.1.3 Չընդունել ծառայությունների արդյունքը՝ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթների և սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անվճար վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.4 Մինչև ծառայությունների արդյունքը պատվիրատուին ներկայացնելը ցանկացած ժամանակ հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝ այդ մասին առնվազն 30 օր առաջ տեղեկացնելով Կատարողին և հատուցելով հրաժարման արդյունքում պատճառված վնասները:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Ծառայությունների արդյունքը, իսկ Ծառայությունների արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.3 Կատարողն իրավունք ունի ՝

2.3.1 Մինչև Ծառայությունների արդյունքը Պատվիրատուին ներկայացնելը, Պատվիրատուի կողմից ցանկացած ժամանակ սույն պայմանագիրը կատարելուց հրաժարվելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու կատարված Ծառայությունների համարժեք գինը, բացառությամբ սույն պայմանագրի 2.1.2 կետով նախատեսված դեպքի:

2.3.2 Մինչև Ծառայությունների արդյունքը Պատվիրատուին ներկայացնելը ցանկացած ժամանակ հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝ հատուցելով հրաժարման արդյունքում պատճառված վնասները՝ այդ մասին առնվազն 30 օր առաջ տեղեկացնելով պատվիրատուին:

2.4 Կատարողը պարտավոր է ՝

2.4.1 Ապահովել Ծառայությունների կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրի 2.1.2 կետով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները:

2.4.3 Սույն պայմանագրի 2.1.3 կետով նախատեսված դեպքում Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում անվճար ապահովել թերությունների վերացումը և Պատվիրատուին վճարել սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.4.4 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարողը մինչև 2016թ. նոյեմբեր ամիսը ներառյալ մատուցված Ծառայությունների հանձնման-ընդունման արձանագրությունը Պատվիրատուին ներկայացնում է մինչև 2016թ. դեկտեմբերի 5-ը, երկու օրինակից:

3.2 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից հինգ աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման- ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունները չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.3 Կատարողի կատարած Ծառայությունների արդյունքը Պատվիրատուի կողմից ընդունված է համարվում երկկողմանի հանձնման- ընդունման արձանագրությունը ստորագրելու պահից:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Սույն պայմանագրով Կատարողի մատուցած Ծառայությունների գինը կազմում է 24103,5 (քսանչորս հազար մեկ հարյուր երեք դրամ հարյուր հիսուն լումա) հազար << դրամ,այդ թվում Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, այդ թվում հարկերը և այլ պարտադիր վճարները:Ծառայությունները մատուցվում են 0% շահույթով:

4.2 Պատվիրատուն սույն պայմանագրի 4.1 կետում նշված գումարը Կատարողին վճարում է 'համաձայն N1 հավելվածի հետևյալ կարգով'

ա/ մինչև 2016 թվականի նոյեմբեր ամիսը ներառյալ մատուցված ծառայությունների դիմաց վճարումները կատարվում են միանվագ կարգով, ամսեկան կտրվածքով, մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա 5-րդ աշխատանքային օրը , որպես կանխավճարի, որը մարվում է մինչև 2016թ.ի դեկտեմբերի 15-ը:Ընդ որում յուրաքանչյուր ամիս վճարվող գումարի չափը ներկայացված է սույն պայմանագրի N1 հավելվածում:

բ/ 2016թ-ի դեկտտեմբեր ամսին մատուցվելիք ծառայությունների դիմաց գումարների վճարումները կատարվում են միանվագ կարգով մինչև սույն թվականի դեկտեմբերի 20-ը, որպես կանխավճար, որը մարվում է մինչև 30.12.2016թ. ներառյալ՝ երկկողմ հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա:

4.3 Պատվիրատուն գումարները վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ.

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայությունների որակի և սահմանված պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի 2.1.2 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման և 2.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Ծառայությունները չընդունվելու, ինչպես նաև 2.4.4 կետով նախատեսված ժամկետը խախտելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5%-ի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայությունների կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացած օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Ծառայությունների

արժեքի 0,05%-ի չափով:Սույն պայմանագրի 4.3 կետով նախատեսված դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացած օրվա համար գանձվում է տույժ Պատվիրատուին հետ վերադարձման ենթակա գումարի 0,05 տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5,2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություններ կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարներից, կամ հանձնվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.5 Պատվիրատուի կոմից սույն պայմանագրի 4.2 և 4.3 կետերով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացած օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 %-ի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվությանն են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տուգանքի և տույժի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

5.8 Այն դեպքում, երբ 'Գնումների մասին ' ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների կատարման վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև սույն պայմանագրի կնքումը Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ) կամ Կատարողին հաղթող ճանաչելու(ընտրելու) մասին որոշումը չի համատասխանում ՀՀ օրենսդրությանը, ապա այդ հիմքերը ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել սույն գնման պայմանագիրը , եթե արձանագրված խախտումները մինչև սույն պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային սույն պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կատարողը պարտավոր է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել Պատվիրատուի կրած վնասները այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը սույն պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով :

5.9 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայությունների մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչ այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմերից որևէ մեկի առաջարկության առկայության դեպքում,որ

- Պատվիրատուի մոտ չի վերացվել գնման առարկայի օգտագործման պահանջը.
- Եթե դա Պատվիրատուի գործողության կամ անգործության հետևանք չէ:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ '' ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ''

Սույն պայմանագրով պարտավորությունները ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կամխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների ծառայությունների դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը:Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3(երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7.ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 2016 թվականի դեկտեմբերի 25-ը:Սույն պայմանագրի պայմանները կիրառվում են կողմերի միջև 2016թ-ի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների նկատմամբ:

7.2 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության:Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի փախադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

7.4 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով:Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.5 Սույն պայամանգիրը չի կարող միակիորեն կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի:

7.6 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կոմին տրվում է մեկական օրինակ:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատվիրատու	Կատարող
ՀՀ Արագածոտնի մարզպետարան	«Ապրանքների մատակարար» ՊՈԱԿ
Ք. Աշտարակ Վ.Պետրոսյան 4	դպրոց ՊՈԱԿ
Աշատարկի ՏԳԲ	
հ/հ 900441034023	ՎՏԲ-Հայաստան Բանկ
	ՀՎՀՀ 16004902001100
ՀՎՀՀ 05004247	ՀՎՀՀ 05008802
Մարզպետարանի աշխատակազմի ղեկավար-գլխավոր ֆինանսիստ	Դպրոցի տնօրեն
Հ.Գասպարյան	Գ. Հովակիմյան
ստորագրություն	ստորագրություն
	Կ.Տ

Հավելված N1

«01» 02 2016թ. կնքված պայմանագրի

«Ապարանի մարզպետարան» ՊՈԱԿ-ին 2016թ տրամադրվելիք

գումարներն ըստ ամսեկան բացվածքի

N	Ամիսը	Գումարը(հազար դրամ)
1	Հունվար	—
2	Փետրվար	4386,7
3	Մարտ	4386,7
4	Ապրիլ	10171,7
5	Մայիս	10171,7
6	Հունիս	10171,7
7	Հուլիս	15956,5
8	Օգոստոս	15956,5
9	Սեպտեմբեր	15956,5
10	Հոկտեմբեր	24103,5
11	Նոյեմբեր	24103,5
12	Դեկտեմբեր	24103,5

Պատվիրատու

ՀՀ Արագածոտնի մարզպետարան

Ք. Աշտարակ Վ.Պետրոսյան 4

Աշատարկի ՏԳԲ

Մարզպետարանի աշխատակազմի ղեկավար-

-դարձուցիչ Գեղամսիան

Հ.Գևորգյան

ստորագրություն

Կատարող

«Ապարանի մարզպետարան» ՊՈԱԿ

դպրոց ՊՈԱԿ

ՀՏԲ-Հայաստան Բանկ

ՀՀ 16004902001100

ՀԿՀՀ 05006602

Դպրոցի տնօրեն

Հ.Հովակիմյան

ստորագրություն

Կ.Տ